ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐ.

Կոնդակներ ընդհանրական Տաճկաստանի՝ Կարնոյ, Պանտրմա—Պալբքէսէրի, Դաղատիոյ, Սեբաստիոյ, Տիգրանակերտի և Եգիպտոսի վիճակների հայ հոգևորականների և ժողովրդի անունով Տ. Տ. Սմբատ, Կարապետ, Բարգէն, Զաւէն և Մկրտիչ եպիսկոպոսների ձեռնադրութեան մասին. 2 հոկտեմբ. թ. թ. 2158—2163.

Գրութիւն Ս. Պետերբուրգի Կայսերական Հնագիտական Խորհրդի անունով, որով հաղորդուեց, թէ Նորին Սրբութիւն Ազգիս Վեհափառ Հայրապետը ընդունելով Անիում հիմնուելիք Հնագիտական Ինստիտուտի պատուաւոր հոգաբարձուի կոչումը՝ օրհնում է ակադեմիկ Ն. Մառին և նրան աջակցողներին. 6 հոկտեմբ. թ. 2167.

Գրութիւններ Արմաշի Դպրեվանքի դպրոցի տեսուչ Տ. Գարեգին վարդապետի և Տարօնի վիճակի առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսի անունով, որոնց հետ ուղարկուեցին վանքերի գրադարաններին նուէր Մայր Աթոռի տպարանում եղած գրքերից մի-մի օրինակ. 6 հոկտեմբ. թ. 2169, 2170.

Կոնդակ Տիգրանակերտի Հայոց Առաջնորդի անունով, որով պատուիրուեց ժողովել իւր թեմում եղած բոլոր ձեռագրերը և ուղարկել Էջմիածին՝ Մայր Աթոռի մատենադարանում ապահով պահելու համար. 6 հոկտեմբ. թ. 2173.

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով պատուիրուեց ազատ համարել Մայր Աթոռի միաբան Տաճատ վարդապետին հոգևոր կոչումից. Այս մասին տեղեկութիւն տրուեց և Տարօնոյ առաջնորդին՝ պատրիարքի միջոցով. 6 հոկտեմբ. թ. 2174, 2180.

Գրութիւն Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի Վարչութեան անունով, որով ուղարկուեց Ճեմարանի մատենադարանում պահելու համար Վեհարանում՝ եղած «Դասագիրք ընդհանուր պատմութեան» Ն. Քարամեանի, Միջին դար՝ 76 օր. և Նոր դար՝ 135 օրինակ։ 7 հոկտեմբ. թ. 2179.

Գրութիւն Վրաստանի Հայոց առաջնորդի անունով, որով յանձնարարուեց բացատրել՝ թէ պ. Սիմէոն Թումանեանի 10,000 ռ. նուիրաբերած գումարի մասին ինչ կարգադրութիւն է եղած թեմական իշխանութեան կողմից։ 7 հոկտեմբ. թ. 2184.

Կոնդակ Ղարաբաղի վիճակի Հերհեր գիւղի եկեղեցական–ծխական հոգաբարձութեան անունով, որով հաստատուեցին հոգաբարձութեան անդամներ՝ պ. պ. Յարութիւն Բալայեան Զալիեանց, Սարգիս Աղաբէկեան Գրիգորեանց և Աւետիս Մկրտչեան Աւանէսեանց և անձնափոխանորդներ՝ պ. պ. Վանի Աւագեան Բախիշեանց, Միրզա Մուսայեան Պետրոսեանց և Խաչատուր Ներսիսեան Յարութիւնեանց՝ և տեղական ժողովրդի ընտրութեան և Կոնսիստորիայի նախանդամ Տ. Եղիշէ վարդապետի միջնորդութեան համաձայն։ 8 հոկտ. թ. 2195.

— Աստրախանի թեմի Նովոբասսիյսկ քաղաքի եկեղեցական-ծխական հոգաբարձութեան անունով՝ քաղաքում ծխական դպրոց բաց անելու առթիւ։ 8. հոկտեմբերի. թ. 2196.

Մակագրութիւն Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի Վարչութեան անունով, որով թոյլ տուեց Ճեմարանին կից վարժոց բանալ, վարչութեան միջնորդութեան համաձայն։ 13 հոկտեմբ. թ. 2214.

Գրութիւն Մայր Աթոռի տպարանի Վարչութեան անունով, որով ուղարկուեցին վեհարանում եղած զանազան բովանդակութիւն ունեցող գրքեր՝ վաճառելու համար։ 14 հոկտեմբ. թ. 2227.

Երջաբերական կոնդակներ Ռուսաստանի թեմական առաջնորդների անունով, որոնցով պատուիրուեց կարգադրել թեմերի բոլոր Հայոց եկեղեցիներում գանձանակ շրջեցնել՝ պատերազմում ձեռաստուած զինուորների և նրանց ընտանեաց օգտին և գոյացած դրամն ուղարկել Ս. Էջմիածնի Ս. Սինոդին՝ կենտրոնական Նպաստամատոյց Ընկերութեան ուղարկելու համար։ 15 հոկտեմբ. թ. 2231—2236. Այս մասին տեղեկութիւն տրուեց Ս. Էջմիածնի Սինոդի 15 հոկտեմբ. թ. 2237.

Գրութիւն Մայր Աթոռի միաբան Տ. Խաչիկ Ծ. վարդապետի անունով, որով ուղարկելով Տեղեր (Դղբր) գիւղի Ս. Աստուածածին վանքի պարտապանների և պարտքերի ցուցակը՝ պատուիրուեց ժողովել յիշեալ գումարը և մատուցանել Նորին Սրբութեան յիշեալ վանքը նորոգելու համար։ 15 հոկտեմբ. թ. 2238

Գրութիւն Հին Խրիմի Ս. Խաչ վանքի վանահայր Տ. Իսահակ վարդապետի անունով, որով պատուիրուեց տեղեկութիւն տալ Նորին Սրբութեան՝ թէ պ. Գ. Կարամուրզայեանի ծախքով շինած վանքի շինութեան վերայ որքան ծախք է եղել և առհասարակ շինութիւնն ինչ յարմարութիւններ ունի։ 20 հոկտեմբ. թ. 2262.

Կոնդակ Ս. Էջմիածնի Ս. Սինոդի անունով, որով պատուիրուեց պահանջել բոլոր կոնսիստորեաններից 1910 թուի մտից և ելից հաշիւները՝ տպագրելու համար. անկախ դրանից կազմել բոլոր հոգևոր և Մայր Աթոռի հաստատութիւնների 1911 թ. նախահաշիւը և ներկայացնել Նորին Սրբութեան ի հաւանութիւն և ի հաստատութիւն։ 21 հոկտեմբ. թ. 2271.

— Նոյն Սինոդի անունով, որով պատուիրուեց ընդունել Մայր Աթոռի հոգևոր ճեմարանաւարտ Աբել Աբրահամեանին Մայր Աթոռի կուսակրօն միաբանութեան շարքը։ 21 հոկտեմբ. թ. 2272.

Կոնդակներ թեմական դպրանոցների հոգաբարձութեան նախագահների անունով, որոնցով պատուիրուեց

ներկայացնել Ս. Էջմիածնի Սինոդին դպրանոցների 1909|10 ուսումն. տարուայ եվ և մտից հաշիւը և 1910|11 ուսումն. տարուայ նախահաշիւներն ի հաստատութիւն։ 21 հոկտեմբ. թ. 2273—2276.

Կոնդակ Երևանի Փոխ—թեմական Տ. Խորէն եպիսկոպոս Մուրադբէգեանի անունով, որով նա հաստատուեց թեմական դպրանոցի նոր կառուցանելի շինութեան համար ընտրուած յանձնաժողովի նախագահ և նոյն յանձնաժողովի անդամներ հաստատուեցին յետագայ անձինք՝ պ. պ. Գեղամ Ազիզեան, Գէորգ Ամիրեան, Առաքել Աֆրիկեան, Արտաշէս Գաբրիէլեան, Բարսեղ Եղիազարեան, Վասիլ Եղիազարեան, Վասիլ Մէրզոյեան, Կոստանդին Իսահակեանի, Յովհաննէս Նազարէթեան, Վահան Պօղոսեան, Աբրամ Տէր Գրիգորեան, Գրիգոր Տէր Խաչատրեան, Միրական Տէր Մարտիրոսեան և Յովհաննէս Տէր Միքայէլեան։ 21 հոկտեմբ. թ. 2277.

Գրութիւն Ս. Պետերբուրգի Կայսերական Հնագիտական Ընկերութեան անունով, որով ծանուցուեց, թէ Ընկերութեան վերադարձած, Մայր Աթոռի մատենադարանից ուղարկած, № 481 և 482 ձեռագրերը ստացուել են։ 25 հոկտեմբ. թ. 2289.

Գրութիւն Թիւրքիայի Ամենապատիւ Պատրիարքի անունով, որով յանձնարարուեց կարգադրել, որ Տ. Յովսէփ արքեպիսկոպոսը դնայ իւր պաշտօնավայրը—Վան։ 25 հոկ. թ. 2290.

Գրութիւն Ամերիկայի առաջնորդական փոխանորդի անունով, որով պատուիրուեց՝ նոր առաջնորդ ընտրելու առթիւ տուած կոնդակն ուղարկել Ուստրի Ս. Փրկիչ եկեղեցու հոգաբարձութեան ի կատար ածելու։ 25 հոկտ. թ. 2292.

Գրութիւն Տարօնի թեմի առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս Խարախանեանի անունով, որի հետ ուղարկուեց, Կիւլպէնկեան առևտրական տան միջոցով ուղարկուած,

Պոպովեան վարժարանի շինութեան համար մի հազար ռուբլու փոխանակագիրը։ 25 հոկտեմբ. թ. 2297.

Երջաբերական կոնդակներ Ռուսահայոց թեմական առաջնորդների անունով, որոնցով պատուիրուեց խորհրդակցել պետական դպրոցների կրօնուսոյցների հետ և խորհրդակցութեան արդիւնքը ներկայացնել Նորին Սրբութեան՝ այդ դպրոցների կրօնի դասաւանդութեան համար միօրինակ ծրագիր կազմելու։ 26 հոկտեմբ. թ. թ. 2299—2304.

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որի հետ ուղարկուեց Բրմանստանի Տ. Համբարձում քահանայից Էջմիածնի նուիրած 10 անգլիական ոսկու փոխանակագիրը։ 26 հոկտեմբ. թ. 2306.

Հայրապետական պարգեւատրութիւն.

Կոնդակներ Վասպուրականի Կաուց անապատի միաբաններ՝ Գրիգոր Ծ. վարդապետ Խէրանեանի և Եղիազար Ծ. վարդապետ Պետրոսեանի անունով, որոնցով շնորհուեց վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք։ 2 հոկտեմբերի թ. թ. 2156, 2157.

Հայրապետական գոհունակութիւն եւ օրհնութիւն.

Կոնդակ օրհնութեան պ. Գրիգոր Զալխուշեանի անունով՝ նրա 25-ամեայ գրական գործունէութեան յոբելեանի կատարման առթիւ։ 4 հոկտեմբ. թ. 2165.

— Օրհնութեան պ. Դաւիթ Աւան Իւզբաշեանի անունով՝ Սև ջուր գետից ջուր հանելու Ս. Էջմիածնի վարելահողերի ոռոգման գործի գլուխ կանգնելու առթիւ։ 6 հոկտեմբ. թ. 2171.